ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի ԽՈՍՔԸ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Սիրելի հոգևոր եղբայրներ, վսեմաշուք, հարգարժան, սիրելի նախագահ, հարգարժան ներկայացուցիչներ հայոց պետականության ավագանիին, Ղարաբաղի մեր թանկագին Հանրապետության ներկայացուցչին և բոլոր ներկայացուցիչներուդ՝ հոգևորական թե աշխարհական, որոնք Մայր Հայաստանի հողեն, Արցախեն և արտասահմանի բոլոր երկրներեն այստեղ հավաքված եք այսօր գերագույն սրբազան պարտականության մը կատարումին համար, պարտականություն, որ կապված է ամեն մեկուս խղճին և մեր ապագայի պատմության կերտումի հրամայականին:

Եղբայրներ, քույրեր, ես այս պահուն հուզված եմ ոչ թե անձնական պատճառով, այլ վերհիշումովը այն պատմական պահին, երբ այստեղ՝ Սուրբ Էջմիածնին մեջ ճիշտ հիսուն տարիներ առաջ՝ 1945-ին, Կիլիկիայի Աթոռեն եկավ Էջմիածնի զավակ Գարեգին Ա. Հովսեփյանց Կաթողիկոսը և ինքը բերավ իր ամբողջական մասնակցությունը և զորակցությունը, եղբայրակցությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսության: Ես կարդացել եմ ատենագրությունները և այսօր փառք կուտամ Աստուծո և խոնարհական սրտով կծնրադրենք առջևդ. փառք քեզ, Տեր, որ ուրիշ Գարեգինի մը շատ ավելի նվաստ արժեքով, քան մեծանուն Գարեգին Հովսեփյանցին տվիր այդ պատիվը այստեղ ըլլալու և միասնության խորհրդանիշին ձայնը հանդիսանալու այս պատկառելի և պատմականորեն նշանակալից ժողովին մեջ:

Եղբայրներ և քույրեր, ժամանակները կփոխվին: Բեռլինի պատերը ինկան, երկաթե վարագույրը խորտակվեցավ, քսան տարվան բանտարկյալը հանրապետության նախագահ դարձավ, Միացյալ Ազգերուն Կազմակերպության մուտքին նորանկախ պետություններու դրոշներով աշխարհը ծաղկազարդվեցավ: Մենք իբրև հայություն գերագույն շրջադարձը ունեցանք մեր Հայաստանի Հանրապետության անկախ պետականության ստեղծումովը, որուն համար քրտինքը մեր Աստուծմե օրհնվեցավ, արյունը մեր հերոսներուն Աստուծմե սրբվեցավ և հոչակվեցավ վերստին քսաներորդ դարուն մեջ հայոց անկախությունը: Մենք այս իրականության դիմաց կերպարանափոխվելու մտածողությունը իբրև պետական ազգ որդեգրելու հարկավորության առջև ենք: Ան, որ չի փոխվի, կնշանակի, որ մարդ ըլլալու հատկանիշներեն ամենեն կարևորներեն մեկեն զրկված է: Ժամանակներու ոգին, ժամանակներու ընթացքը պետք է ըմբռնենք, նշանները կար-

դալ, կըսե Ավետարանը, նշանները միության, միասնության, ամբողջականության գարունը կբերեն մեր կյանքին մեջ, և դուք մշակները պիտի ըլլաք այդ գարնան ծաղկումին և մշակումին և պտղաբերումին մեր պատմության մեջ: Իմ խոսքը կփակեմ հիշեցնելով ձեզի երեք պարզ ճշմարտություններ. այսօր այնպես, ինչպես ես կզգամ հոգիիս խորության մեջ և կհավատամ, դուք ալ կզգաք, չորս աչքեր կան, որ մեզի կնայեն՝ **առաջինը** երկինքեն Աստուծո աչքը, Արագածի լեռեն կախված անպարան Լուսավորչի աստղի մեջ: Ինչպե՞ս մեր աչքերը պիտի հանդիպին Աստուծո աչքին և անոր մեջ ժպիտ պիտի տեսնե՞ն՝ ի վկայություն մեր հավատարիմ գործունեությանը Աստուծո կամքի: **Երկրորդ աչքը** մեր հայ ժողովուրդի աչքն է՝ բացված Մայր Հայրենիքեն, Արցախեն և արտասահմանի բոլոր երկիրներեն: Կրնամ երևակայել սա պահուն, թե ինչպես բազմամիլիոն աչքեր դեպի Սուրբ Էջմիածին են ուղղված և առանց ֆիզիկական աչքերու ճառագայթի հոգեկան ճառագայթումով ձեզի կնային, ինձի կնային, նախագահին կնային և կըսեն՝ կատարեցեք ձեր խղճի պարտքը: **Երրորդ աչքը** օտար աշխարհին աչքն է, որ բացված է մեր վրա: Այսօրվան դարն այլևս կըղզիացած դարը չէ: Դեռ ասկե հինգ վայրկյան առաջ, կամ ավելի ճիշտը երկու ժամ առաջ էր, բայց ինձի այդպես թվեցավ, ներողամիտ կըլլաք, երկու ժամ առաջ ֆրանսացի թղթակիցը եկավ, ի՞նչ գործ ուներ մեզմով զբաղվելու: Աշխարհը միջազգայնացել կերպարանք է չգեցած: Իրարմե կախում ունեցող ազգերու մեկ ընկերակցություն է, ընտանիք է: Կատարելապես անկախ, իրարմե անջատ ազգեր գոյություն չունին այլևս: Եվ օտար Եկեղեցիներ, օտար ազգեր, որոնք հայության հետ իսկական աղերս ունին, անոնց աչքերը կնային ձեզի: **Եվ վերջապես չորրորդ** ու վերջին աչքը, որ ես այսօր կտեսնեմ, մեր նոր սերունդի, գալիք սերունդի, Հայաստանի ու հայ ժողովուրդի ապագան կերտող սերունդի աչքերն են, որ ուղղված են ձեր վրա: Եկեք այս խորունկ ապրումով, այսպիսի ընդհանրական մտահոգություններով, այսպիսի լայնախոհ, հեռատես և ամբողջապարփակ ըմբռնումով մոտենանք այսօր մեր պարտականությանց և, ինչպես ըսավ հարգելի, սիրելի պարոն նախագահը, վերանանք անցյալեն ժառանգված մասնակի, տեղական կամ այլ մտածումներեն: Ամբողջ ազգ, ամբողջ հայրենիք, ամբողջ եկեղեցի՝ ա՛յս տեսիլքով առաջնորդվինք և վստահ եղեք, եղբայրներ և քույրեր, այստեղեն երբ դուրս ելլեք, եթե Աստուծո ժպիտին հանդիպիք, եթե մեր հայերու ուրախության արցունքին հանդիպիք, ես կապահովեմ ձեզ, որ ապագայի սերունդներուն օրհնանքին պիտի արժանանաք: Ահավասիկ այս մտքով այժմ կամփոփվիմ և կըսեմ ձեր բոլորիդ անունով, Շնորհալիի աղոթքին բառերով.

«Իմաստութիւն Հօր Հիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել, զբարիս խօսել, զբարիս գործել յամենայն ժամ ի չար խորհրդոց, ի բանից և ի գործոց փրկեա զիս, փրկեա զմեզ. ամէն»: